

## 5.2. ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ

Նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլում քաղաքներում իրականացվեց տների (շինությունների) ցուցակագրում՝ այդ նպատակով օգտագործելով սխեմատիկ հատակագծերի մեկ օրինակը, իսկ գյուղական վայրերում կազմվեցին գյուղական բնակավայրերի ու դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմում, որոնց հիման վրա պետք է իրականացվեր տվյալ տարածքի բաժանումը մարդահամարի անցկացման համար կազմակերպական առումով կառավարելի տեղամասերի՝ մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի: 2015թ. մարտ-ապրիլ ամիսներին անցկացվեցին ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժնի պետերի և դրանցում մարդահամարի աշխատանքները համակարգողների հրահանգավորումները՝ ԼՂՀ քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) և գյուղական բնակավայրերի ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին հարցերով: 2015թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում՝ 2015թ. հուլիս-օգոստոս ամիսներին, ըստ պատրաստված սխեմատիկ հատակագծերի, իրականացվեցին տների ցուցակների կազմման աշխատանքներ՝ պայմանագրային հիմունքներով 1 ամիս ժամկետով հավաքագրված և համապատասխան ուսուցում անցած աշխատողների (ցուցակագրողները՝ թվով 73 մարդ) կողմից: Այդ թվում՝ Ասկերան քաղաքում՝ 2, Հաղրուք քաղաքում՝ 4, Մարտակերտ քաղաքում՝ 7, Մարտունի քաղաքում՝ 5, Քարվաճառ քաղաքում՝ 1, Շուշի քաղաքում՝ 6, Բերձոր քաղաքում՝ 2, Կովսական, Միջնավան և Որոտան քաղաքներում՝ 1-ական: Ցուցակագրման աշխատանքներն իրականացվել են սկսած հուլիս ամսից, և ավարտվել են օգոստոս ամսին: Ցուցակների կազմման ժամանակ ցուցակագրողների կողմից մեկ անգամ ևս ճշգրտման ենթարկվեցին բնակավայրերի սխեմատիկ հատակագծերը: ԼՂՀ 252 գյուղական համայնքներում գյուղապետերի աշխատակազմի քարտուղարների կողմից կազմվեցին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները՝ առաջնորդվելով գյուղապետարաններում վարվող տնային տնտեսությունների հաշվառման «Համայնքի գրքերի» գրառումներով: Ցուցակներում ներառված էին նաև ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկներ՝ հանգստյան տներ, ծննդատներ, առողջարաններ, հիվանդանոցներ և այլն, ինչպես նաև սոցիալական նշանակություն ունեցող կազմակերպություններ՝ դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկական խնամատարական կազմակերպություններ:

Մինչև 2015թ. հուլիսի 1-ը իրենց ենթակայության տակ բնակարանային ֆոնդ ունեցող քաղաքային համայնքների բնակարանային բաժինների, գյուղապետարանների, պետական հիմնարկների, իրավաբանական անձանց կողմից ներկայացվեցին «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթեր ԼՂՀ բոլոր բազմաբնակարան շենքերի համար, անկախ դրանց սեփականության ձևից և պատկանելությունից: Սույն տեղեկատվության հավաքագրման նպատակն էր ԼՂՀ 2015թ. մարդահամարի հարցաթերթի՝ «Տնային տնտեսության բնակարանային պայմանները» բաժնում բազմաբնակարան շենքերի վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ, միասնական և ամբողջական լրացման ապահովումը: